

Հաստատում եմ
«Սարալանջի սիջն դպրոց» ՊՈԱԿ-ի

Տնօրեն՝  /Ս. Սարգսյան/

« 04 »  2023 թ.



Ուսող-ՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023-2024 ուսումնական տարի

III դասարան

Դասվար՝  Կ Ֆահրադյան

Դասարանի ղեկավարը

(տարրական դպրոցում՝ դասվար)

- 1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.
 - 2) նպաստում է հանրակրթական դպրոցի և ընտանիքի մանկավարժական միասնական պահանջների ապահովմանը սովորողների նկատմամբ.
 - 3) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.
 - 4) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հանրակրթական դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.
 - 5) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.
 - 6) մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին կարգապահական տույժի ներկայացնելու հարցը.
 - 7) արգելում է սովորողների, ուսուցիչների և ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող է նսովորողի առաողջության, կյանքի համար վտանգ պարունակեն, ինչպես նաև խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:
- Կազմում է աշխատանքային պլան՝ ելնելով դասարանի տարիքային խմբից
 - Կատարում է դասալսումներ
 - Շաբաթական առնվազն մեկ անգամ անցկացնում է դասղեկի ժամ և գրանցում դասամատյանում
 - Պարբերաբար հրավիրում է ծնողական ժողովներ՝ ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն
 - Վարում է դասագրքերի վարձավճարների հավաքագրման մատյանը

1. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում ա/Ուսումնական տարվա ընթացքում իրականացնել անձի համակողմանի և ներդաշնակ դաստիարակություն

բ/դաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս պետք է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները

գ/ կիրառել արդյունավետ մեթոդներ

դ/ կանխել սովորողների բացակայությունները և ուշացումները

ե/ հետևել սովորողների ֆիզիկական և մտավոր առողջության պահպանմանը

2. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2.1 Հոգևոր դաստիարակություն- Հոգևոր դաստիարակությունը շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Այս կարևորությունը գիտակցելով՝ աշակերտին քրիստոնյա մեծացնելու, նաև հոգևոր ժառանգությունը փոխանցելու համար պետք է հաշվի առնել 1-ին հերթին նրա մտածողության, երևակայության, բարոյական առանձնահատկությունները:

2.2 Գեղագիտական դաստիարակություն-Գեղագիտական դաստիարակության կարևորագույն խնդիրն է երեխային սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնելու հոգևոր հարստություն, բարություն և դրա հիմքում իր մեջ արմատավորել գեղեցիկը:

2.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն –Ռազմահայրենասիրական դաստիարակությունը սկսվում է դպրոցից: Դպրոցը երեխայի մոտ պետք է դաստիարակի հայրենիքին անշահախնդիր ծառայելու, ակտիվ աշխատանքային և հասարակական գործունեության նկատմամբ ձգտում:

2.4 Ֆիզիկական դաստիարակություն-Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կովեն իրենց մարմինը ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

2.5 Աշխատանքային դաստիարակություն –Աշխատանքային դաստիարակությունը մարդկային կարևորագույն գործունեություն է: Դրա միջոցով երեխան փորձում է ինքնահաստատվել: Դրա միջոցով մտերմանում է մեծահասակների հետ, համագործակցում, սովորում պլանավորել ու վերահսկել սեփական գործողությունները, ձեռք է բերում կյանքի հմտություններ:

2.6 Բնապահպանական դաստիարակություն-Բնապահպանական դաստիարակությունը շատ կարևոր է դպրոցում: Սովորողները պետք է լուծեն ոչ թե գլոբալ խնդիրներ, այլ հիմնահարցեր, որոնք վերաբերում են իրենց շրջապատին: Պետք է կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները:

3. Դպրոց-ընտանիք կապը-Աշակերտների դաստիարակության արդյունավետությունը կախված է դպրոց-ընտանի քիամագործակցությունից: Դաստիարակությունը հաջողություն է ունենում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքն ու երեխայի դաստիարակությունը կատարվում է միաժամանակ:

Տեղեկություններ աշակերտների մասին

Հա- մար	Աշակերտի ազգանունը, անունը, հայրանունը	Ծննդյան տարեթիվ	ամիս	օր
1	Բոբիկյան Արմենուհի Ալիկի	2015	11	26
2	Թումասյան Ալեքս Ծովակի	2015	09	06
3	Թումասյան Մկրտիչ Արմենի	2015	05	13
4	Հարոյան Վահագն Վահեի	2015	12	10
5	Ղազարյան Ալվինա Աշոտի	2015	09	19
6	Պապոյան Ալեքս Հարությունի	2015	09	25
7	Սարգսյան Արտակ Աղվանի	2015	11	18
8	Սարգսյան Նարե Արմանի	2015	08	03
9	Փանոսյան Մարիա Ռադիկի	2015	09	23

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը
1	Դասագրքերի գնահատում, դասարանի ավագի ընտրություն, հերթապահության նշանակում	04.09-08.09
2	Զրույց ամառվա ընթացքում ընթերցած գրքերի շուրջ	11.09-15.09
3	Զրույց հայրենասիրության մասին	18.09-22.09
4	Մարդիկ մեր շուրջը	25.09-29.09
5	Մաքրությունն առողջության երաշխիքն է	02.10-06.10
6	Կարգապահությանը վերաբերող հարցերի քննարկում, գրքերի, տետրերի ստուգում	09.10-13.10
7	Գիրքը իմ կյանքում	16.10-20.10
8	Զրույց «Պահպանել բնությունը, նշանակում է պահպանել հայրենիքը»	30.10-03.11
9	Անվտանգ երթևեկություն: Երթևեկության կանոններ	06.11-10.11
10	Օրվա ռեժիմ	13.11-17.11
11	Զրույց «Իսկական ընկերը նա է, ով...»	20.11-24.11
12	Ինչպես հաղթահարել վատ սովորությունները	27.11-01.12
13	Ո՛վ և ինչպե՛ս է ընտրել իմ անունը	04.12-08.12
14	Աշխատանքը ազնվացնում է մարդուն	11.12-15.12
15	Ամանորի նախապատրաստում	18.12-22.12
16	Երկրագունդը մեր տունն է	08.01-12.01
17	Ու՛մ կուզե՛ի նմանվել	15.01-19.01
18	Մենք՝ բոլորս, հավասար ենք	22.01-26.01
19	Հայոց բանակի ստեղծման պատմությունը և նրա անցած ուղին	29.01-02.02
20	Աշակերտներին հետաքրքրող և հուզող հարցերի քննարկում	05.02-09.02
21	Իմ երագանքը	12.02-16.02
22	Երեխաների ընտրությամբ ընտրել Հ. Թումանյանի որևէ հեքիաթ և քննարկել	19.02-23.02
23	Գարունը տարվա զարթոնքն է	26.02-01.03
24	Մայրիկների և ուսուցիչների համար պատրաստել տոնական բացիկներ	04.03-07.03
25	Զրույց գեղեցիկի և բարության մասին	11.03-15.03
26	Դասարանային շաբաթօրյակ	18.03-22.03
27	Զրույց «Աշխատանքը հաջողության առաջին պայմանն է»	01.04-05.04
28	Մանկական հաղորդաշարերի քննարկում	08.04-12.04
29	Աշխատանք ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների հետ	15.04-19.04
30	Քննարկել աշակերտների առաջադիմությունն ու կարգապահությունը	22.04-26.04
31	Կենդանական աշխարհի բազմազանությունը	29.04-03.05
32	Երբ մարդիկ անտարբեր են...	06.05-10.05
33	Ինչպես անցկացրեցինք ուսումնական տարին, մեր վերելքներն ու վայրէջքները	13.05-17.05
34	Դասագրքերի գնահատում, ամառային արձակուրդներին տրվող հանձնարարություններ	20.05-24.05

